ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ
ԱՅԱՇԱՏԻԿԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 1937 Թ. ԲԵՐՔԻՑ ԲՆԱՎԱՐՁՈՎ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՏԿ-ՆԵՐԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

338.1
Հ-25

ԴԵՊՈՂՀՐԱՏ • 1937 • ԵԵՐԵՎԱՆ

2012
38

2 802-10

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 1937 Թ. ԲԵՐՔԻՑ ԲՆԱՎԱՐՁՈՎ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՏԿ-ՆԵՐԻ ՑԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

---

1. Կոլտնտեսությունները ՄՏԿ-ներին բնավարձ են վճարում գյուղատնտեսական բոլոր այն աշխատանքների համար, որ ՄՏԿ-ները կատարել են հետևյալ կուլտուրաների համար՝ հացահատիկի, յեգիպտացորենի, բրնձի, արևածաղկի, բամբակի, ճակնդեղի, վուշի, կարտոֆիլի, ռիզկանեփի, մանանեխի, հյուսիսային և հարավային կանեփի, կենաֆի, կանատիկի, ապա խոտհարքի համար այն դեպքերում, յերբ այդ կատարվում է տրակտորային հնձիչ մեքենաներով, յերեքնուկի ու առվույտի սերմերը մաքրելու և այդ խոտերի սերմացվի նկատմամբ ՄՏԿ-ների կատարած ուրիշ աշխատանքների համար։

Վերև թվարկված կուլտուրաների վրա կատարված աշխատանքների համար բնավարձ են վճարում ինչպես ՄՏԿ-ների սպասարկած, այնպես ել ՄՏԿ-ների չսպասարկած կոլտնտեսությունները, յեթե նրանց համար ՄՏԿ-ն աշխատանքներ է կատարել։

2. 1937 թվին վճարման յենթակա յեն բոլոր այն աշխատանքները, որ ՄՏԿ-ները կոլտնտեսությունների համար կատարել են 1936 և 1937 թթ.՝ 1937 թ. բերքի համար։ 1937 թ. չեն վճարվում հարոսների հերկման ու մշակման, 1938 թ. բերքի համար կատարված աշնանավարի ու ցրտահերկի աշխատանքները, ինչպես և ՄՏԿ-ների 1936 թ. աշնանը կատարված աշխատանքները, որ թողնված են իբրև սև ցել։ Մյուս կողմից՝ 1937 թ. վճարման յենթակա յեն 1935 թ. կատարված սև ցելի աշխատանքները, որի բերքն ստացվելու յե 1937 թ.։

3. Առանձին աշխատանքների, ինչպես և աշխատանքների կոմպլեքսի վճարման չափը սահմանվում է ըստ առանձին կուլ-

9 SEP 2013

29.888

տուրաների (հացահատիկ, բամբակ, կարտոֆիլև այլն) բերքատվության այն խմբի համապատասխան, որի մեջ կոլտնտեսությունը մտցված է ըստ ՄՏԿ և կոլտնտեսությունների որինակելի պայմանագրով հաստատված դրույքների։

Կոլտնտեսությունը բերքատվության այս կամ այն խմբին դասելը կատարում է հանձնաժողովը՝ կազմված շրջգործկոմի նախագահից (հանձնաժողովի նախագահը), մթերման կոմիտեյի լիազորից, շրջհողբաժնի վարիչից և ՄՏԿ դիրեկտորից, ներգրավելով համապատասխան կոլտնտեսության նախագահին, իսկ տեխնիկական կուլտուրաների վերաբերմամբ, բացի սրանից, ներգրավվում է մթերող կազմակերպության ներկայացուցիչը։

4. Իբրև բնավարձ հանձնվող գյուղատնտեսական մթերքներն իրենց վորակով պետք է համապատասխանեն այն կոնդիցիային և պայմաններին, վոր հաստատված են համապատասխան կուլտուրաների համար պետությանը պարտադիր կամ կոնտրակտացիոն կարգով հանձնելիս։

Հացահատիկի, բրնձի, արևածաղկի, տիղկանեփի, և կարտոֆիլի վորոշված զտասորտության բարձր գնահատումով վարձատրությունը կատարվում է նույնպես, ինչպես այդ սահմանված է նույն կուլտուրաների նկատմամբ պետությանը պարտադիր կարգով հանձնելիս։

5. Կոլտնտեսություններից բնավարձ ստանալու տարեկան նվազագույն պլանը յուրաքանչյուր ՄՏԿ-ի համար հաստատում է հանրապետության հողժողկոմատը կամ յերկրային (մարզային) հողվարչությունը՝ համաձայնեցնելով ԺԿՄ մթերման կոմիտեյի լիազորի հետ, և հաղորդում ՄՏԿ դիրեկցիային իբրև պարտադիր պլան։

Հացահատիկային կուլտուրաների բնավարձով հանձնման տարեկան պլանը ՄՏԿ-ներին հասցվում է ըստ կուլտուրաների, առանձացնելով ցորենը, հաճարը և լոբազգիները։ Վուշի, կանեփի, կենաֆի և կանատիկի վերաբերմամբ պլանը հաստատվում է առանձին՝ ըստ սերմերի, թելերի և ցողունի։

Յուրաքանչյուր ՄՏԿ համար սահմանված բնավարձի տարեկան նվազագույն պլանը մինչև կոլտնտեսություն չի հասցվում։

Յուրաքանչյուր ՄՏԿ պլանը հաղորդվում է ԺԿՄ մթերման կոմիտեյի շրջլիազորին՝ բնավարձի սահմանված ժամկետներին հանձնումը վերահսկելու համար։ Մթերման կոմիտեյի շրջլիազորը պարտավոր է յուրաքանչյուր ՄՏԿ-ի մատնանշել այն մթերման կայանը, վորտեղ պետք է հանձնվի բնավարձը։

6. Յուրաքանչյուր ՄՏԿ պարտավոր է լրիվ գանձել կոլտնտեսություններից և պետությանը հանձնել այն ամբողջ բնավարձը, վոր հասնում է կոլտնտեսություններից 1937 թ. բերքի համար կատարած աշխատանքի դիմաց, ինչպես և 1936 թվի և նախընթաց տարիների բերքի համար կատարած աշխատանքի ամբողջ պարտքը, բացառությամբ նրա այն մասի, վոր դուրս է գրվել կառավարության վորոշմամբ։

Բնավարձը պետությանը հանձնելիս ՄՏԿ իրավունք չունի թույլ տալու կոլտնտեսություններին, վոր նրանք մի կուլտուրան փոխարինեն մյուսով, բացառությամբ հացահատիկային կուլտուրաների (բացի ցորենից), վորոնք կարող են փոխարինվել պարտադիր հանձնումների համար սահմանված կարգով։ Բնավարձով հանձնվող ցորենը չի կարող փոխարինվել ուրիշ կուլտուրաներով։

ՄՏԿ-ն իրավունք չունի իր մոտ կամ կոլտնտեսության մեջ պահել, ծախսել կամ ՄՏԿ կարիքների համար վերամշակել բնավարձի կարգով հանձնելու յենթակա գյուղատնտեսական մթերքները։

Բնավարձը թագցնելու, ինչպես և բնավարձի կարգով պետությանը հանձնելու յենթակա գյուղատնտեսական մթերքները ծախսելու համար ՄՏԿ դիրեկտորը պատասխանատվություն է կրում դատարանով։

7. ՄՏԿ-ները պարտավոր են բերքահավաքի նախորյակին կոլտնտեսություններին ծանուցագրեր հանձնել այն մասին, վոր նրանք տաս որում պարտավոր են պետությանը հանձնել անցած տարիների բերքի համար կատարված աշխատանքների դիմաց նրանց վրա մնացած բնավարձի ամբողջ պարտքը։

Կոմբայններով բերքահավաքը և կալսումն սկսելուց հետո ամեն 5 որը մեկ անգամ ՄՏԿ-ն յուրաքանչյուր կոլտնտեսությանը հաշիվներ է ներկայացնում կոմբայններով բերքը հավաքելու և կալսելու աշխատանքների բնավարձի վերաբերյալ։

Բացի կոմբայններով կալսելուց և բերքը հավաքելուց, 1937 թ. բերքի համար կատարված բոլոր աշխատանքների դիմաց հասնող բնավարձի հաշիվները ՄՏԿ-ները հանձնում են կոլտնտեսություններին՝ նրանց բերքատվության խմբերի մեջ մտցնելու վերաբերյալ շրջանային հանձնաժողովի վորոշումից վոչ ուշ, քան 3 որ հետո։

Վճռականապես արգելվում է ավանսային հաշիվներ կամ

ծանուցագրեր ներկայացնել կոլտնտեսություններին, ինչպես և բնավարձն ավանսով գանձնել ՄՏԿ-ի ինչպես կատարած, այնպես էլ չկատարած աշխատանքի համար։

Բնավարձն ավանսով գանձող անձինք, ինչպես և նրանք, ովքեր թույլ են տվել բնավարձի ավանսով գանձումը, պետք է յենթարկվեն քրեական պատասխանատվության։

8. Կոլտնտեսությունները պարտավոր են բնավարձը Զադոտզեռնոյի կայաններին հանձնել հինգ որվա ընթացքում՝ կոմբայններով բերքը հավաքելու և կալսելու վերաբերյալ հաշիվներով և տաս որվա ընթացքում՝ մինչ այդ ՄՏԿ-ների կատարած աշխատանքների վերաբերյալ հաշիվներով։

9. Կոլտնտեսությունների կողմից բնավարձի հանձնման պլանի կատարմանը հսկելու նպատակով, ՄՏԿ դիրեկտորը պարտավոր է.

ա) աշնանացանի և գարնանացանի կամպանիան վերջանալուց վոչ ուշ, քան 10 որ հետո, մթերման կոմիտեյի շրջ. լիազորին ստույգ տեղեկություններ ներկայացնել բնավարձով հանձնելու յենթակա կուլտուրաների գծով կոլտնտեսությունների համար կատարած աշխատանքների վերաբերյալ, ինչպես և յուրաքանչյուր 10 որը մեկ մթերման կոմիտեյի շրջ. լիազորին տեղեկագրեր ներկայացնել ամեն մի կոլտնտեսության համար ըստ կուլտուրաների կոմբայններով բերքահավաք կատարելու և կալսիչներով կալսելու աշխատանքի վերաբերյալ.

բ) հացահատիկի ու այլ կուլտուրաների բերքահավաքի սկզբից յուրաքանչյուր 5 որը մեկ անգամ մթերման կոմիտեյի շրջանային լիազորին ներկայացնել նախընթաց հնգորյակում ՄՏԿ-ների կողմից կոլտնտեսություններին տրված բնավարձի վերաբերյալ հաշվեցուցակները։

գ) մինչև կոմբայններով կալսումն ու բերքահավաքն սկսելը, կատարած աշխատանքի համար կոլտնտեսություններին հաշիվները հանձնելուց հետո հինգ որում մթերման կոմիտեյի շրջանային լիազորին ներկայացնել այդ աշխատանքների հաշվեցուցակները, ինչպես և այն ծանուցագրերի մատյանները, վորոնցով կոլտնտեսությունները տեղեկացված են, թե վորքան բնավարձ են հանձնելու նրանք անցած տարիների բերքի համար կատարած աշխատանքի դիմաց՝ պարտքը մարելու նպատակով։

10. Բնավարձով վճարվող աշխատանքների չափը վորոշելու միակ փաստաթղթերն ակտերն են (ՄՏԿ ձև № 41), վորոնք

կազմվում են յերեք որինակից. մի որինակը № 27 հաշվառման թերթի ձևով, և աշխատանքների կարգագիր (наряд)-հաշվետվությունների հետ միասին անմիջապես հանձնվում է ՄՏԿ գրասենյակին, յերկրորդ որինակը հանձնվում է կոլտնտեսությանը, իսկ յերրորդը (արմատը) մնում է տրակտորային բրիգադի բրիգադիրի մոտ։ Ակտերի հիման վրա ՄՏԿ հաշվապահությունը հաշվի յե առնում կոլտնտեսության համար կատարված աշխատանքները և կազմում է կոլտնտեսությունների հաշիվը՝ նրանցից հասնող բնավարձի վերաբերյալ։

ՄՏԿ պարտավոր է միասնական աճող համարակարգով հաժարակալել աշխատանքի վերաբերյալ բոլոր ակտերի բլանկները (յուրաքանչյուր յերեք թերթը մի համարով), բլանկները պահպանել դրամական փաստաթղթերին հավասար և անձնական ստորագրությամբ բրիգադիրին հանձնել նշելով տրված թերթերի համարները։

ՄՏԿ կատարած աշխատանքների վերաբերյալ ակտերը պետք է գրված լինեն ընթեռնելի ու պարզ, ճշգրիտ նշելով կոլտնտեսության անունը, աշխատանքի տեսակը, ինչ կուլտուրաների համար և ինչ գործիքներով է մշակվել, աշխատաչափը և նրա վորակը։

Կոլտնտեսություններն իրավունք ունեն վատ կատարված աշխատանքները չընդունել։

Ակտերը կազմվում են № 41 ձևով յուրաքանչյուր աշխատանքը վերջանալուց անմիջապես հետո, բայց վոչ պակաս, քան ամեն 5 որը մեկ անգամ և ստորագրվում են ՄՏԿ դիրեկտորի կամ նրա տեղակալի կողմից, վորը վարում է կոլտնտեսությունների հաշվարկները, և կոլտնտեսության նախագահի կողմից։

Կոլտնտեսություններում ՄՏԿ-ների կատարած աշխատանքների վերաբերյալ ակտերը վճռականապես արգելվում է կազմել թղթի կտորների կամ զանազան այլ բլանկների վրա, բացի վերև նշված հատուկ բլանկներից։

Ոգտագործված գրքույկն արմատներով ու ակտերի փչացած բլանկներով բրիգադիրն անպայման պետք է հանձնի ՄՏԿ դիրեկցիային, և պետք է պահպանվեն հաշվապահության մոտ։

Աշխատանքն ընդունելու վերաբերյալ ակտերը լրացնելու որինակը բերվում է հավելված № 1-ում։

11. ՄՏԿ դիրեկտորի՝ կոլտնտեսությունների հետ հաշվարկումներ կատարող տեղակալը սիստեմատիկաբար ստուգում է

յուրաքանչյուր տրակտորային բրիգադի ներկայացրած ակտերը՝ դրանք համադրելով տրակտորիստների, կոմբայնների և կալսիչների աշխատանքի հաշվեթերթերի հետ։

Ստացված ակտերն ստուգելիս ՄՏԿ դիրեկտորի՝ կոլտնտեսությունների հետ հաշվարկում կատարող տեղակալը պարտավոր է բոլոր սխալ ձևակերպված ակտերը վերադարձնել՝ դրանք անմիջապես նորից կազմելու համար։ Բացի սրանից, ՄՏԿ դիրեկտորի՝ կոլտնտեսությունների հետ հաշվարկումներ կատարող տեղակալը պարտավոր է ստուգել, թե արդյոք չի՞ խախտվել պայմանագիրն ինչպես ՄՏԿ, այնպես էլ կոլտնտեսությունների կողմից, և խախտում լինելու դեպքում վորոշել այս խախտումից բղխող փոխադարձ պարտավորությունների չափը։

12. ՄՏԿ դիրեկտորները, կոլտնտեսությունների հետ հաշվարկումներ կատարող ՄՏԿ դիրեկտորների տեղակալները և ՄՏԿ-ների գլխավոր հաշվապահներն անձնական պատասխանատվություն են կրում տրակտորային աշխատանքների հաշվառման ճիշտ դրվածքի համար։

Կոլտնտեսություններում ՄՏԿ-ների կատարած աշխատանքների վերաբերյալ ստացված բոլոր ակտերը հաշվապահություն մտնելուց անմիջապես հետո պետք է գրանցվեն կատարված աշխատանքների հաշվառման հատուկ գրքի մեջ ըստ առանձին կուլտուրաների (հացահատիկ, յեգիպտացորեն, արևածաղիկ, բրինձ և այլն)։

ՄՏԿ հաշվապահությունը պարտավոր է վոչ ուշ, քան յուրաքանչյուր ամսի 5-ին բոլոր կոլտնտեսություններին մանրամասն քաղվածքներ ուղարկել նախընթաց ամսին նրանց համար կատարված բնավարձով վճարվող աշխատանքների մասին և կոլտնտեսություններից պահանջել գրավոր կերպով հաստատելու այդ քաղվածքներն ու նրանց համապատասխան լինելը՝ կոլտնտեսություններում յեղած ակտերի պատճենների հետ։

13. Հասանելիք բնավարձի հաշիվները պետք է կազմվեն ՄՏԿ կատարած աշխատանքների համար առանձին՝ ա) հացահատիկայինի [ցորեն, հաճար, գարի, վարսակ, կորեկ, հնդկացորեն, (гречиха), աճար, վիկա, լոբազգիներ], բ) յեգիպտացորենի, գ) բրինձի, դ) արևածաղկի, ե) ճակնդեղի, զ) յերկարաթել վուշի, է) բամբակի, ը) կարտոֆիլի, թ) տիղկանեփի, ժ) մանանեխի, ժա) սոյայի ժբ) կանեփի, ժգ) խոտհարքի աշխատանքի վերաբերյալ և այլն։

Հաշիվներն ստորագրում են ՄՏԿ դիրեկտորը կամ նրա՝ կոլտնտեսությունների հետ հաշվարկումներ կատարող տեղակալը և ՄՏԿ գլխավոր հաշվապահը և ուղարկում կոլտնտեսության նախագահի անունով։

ՄՏԿ-ն հաշվում մատնանշում է այն ժամկետը, վորից վոչ ուշ կոլտնտեսությունը պարտավոր է հանձնել բնավարձը։

ՄՏԿ կատարած աշխատանքի բնավարձի հաշիվները, ինչպես և այն ծանուցագրերը, վոր վերաբերում են անցած տարիների բերքի համար կատարված աշխատանքի բնավարձի պարտքը կոլտնտեսությունների կողմից հանձնելուն, ՄՏԿ հաշվապահության մեջ գրանցվում են հատուկ մատյանում՝ ժամանակագրական կարգով։

Հաշիվներն ու ծանուցագրերն ստորագրությամբ հանձնվում են կոլտնտեսության նախագահին կամ հաշվետարին, իսկ ստորագրություններն ու հաշիվների պատճենները պահվում են հատուկ թղթապանակում՝ կատարված աշխատանքների ակտերի հետ միասին, ըստ առանձին կոլտնտեսության։

14. ՄՏԿ դիրեկտորը, կոլտնտեսությունների հետ հաշվարկումներ կատարող ՄՏԿ դիրեկտորի տեղակալը և ՄՏԿ գլխավոր հաշվապահն անձնական պատասխանատվություն են կրում բնավարձը ճիշտ հաշվելու և կոլտնտեսություններին բնավարձի հաշիվները ժամանակին հանձնելու համար ինչպես մինչև կալսումը կատարած, այնպես էլ կոմբայններով կատարած բերքահավաքի և կալսելու աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաև առանձին կոլտնտեսությունների կողմից ՄՏԿ-ների հաշվի դիմաց բնավարձը ժամանակին և լրիվ վճարելու համար։

ՄՏԿ դիրեկտորը և կոլտնտեսությունների հետ հաշվարկումներ կատարող նրա տեղակալը սիստեմատիկաբար ստուգում են յուրաքանչյուր առանձին կոլտնտեսության կողմից բնավարձն ըստ տրված հաշիվների հանձնումը։

15. Հացահատիկի, արևածաղկի, բրնձի, տիղկանեփի, կարտոֆիլի և բնավարձով վճարվող այլ կուլտուրաների հանձնված բնավարձի հաշվառումը յուրաքանչյուր կոլտնտեսության վերաբերյալ ըստ կուլտուրաների կատարում է ՄՏԿ-ն մթերող կայանների կողմից ամեն որ ՄՏԿ-ներին տրվող հաշվեցուցակների պատճենների հիման վրա (Զագոտզեռնոյի վճարման հրաման ձև № 31-ի)։

Միակ փաստաթուղթը, վոր հաստատում է բնավարձի հանձնումը, մթերման կայանի ստացականն է՝ «բնավարձ» շտամպով։

Մթերման կայանն ստացականը տալիս է կոլտնտեսությանը բնավարձի հանձնման որը։

16. Բնավարձի վերաբերյալ ՄՏԿ և կոլտնտեսությունների բոլոր հաշվարկումները (հաշվարկման աղյուսակները, ուրիշ փաստաթղթեր ու գրություններ), ինչպես և բնավարձը պետությանը հանձնելու վերաբերյալ բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն մթերման կոմիտեյի շրջլիազորին, հրահանգիչներին ու ստուգիչներին նրանց առաջին խնդրանքով՝ ծանոթանալու համար։

17. Այն դեպքերում, երբ բնավարձը մթերման կայանին հանձնելիս կոլտնտեսությունը բերած լինի ավելի շատ քանակությամբ հացահատիկ, արևածաղիկ, տիղկանեփ կամ այլ կուլտուրաներ, քան նա պետք է տա համաձայն ներկայացված հաշիվների՝ ՄՏԿ կատարած բոլոր աշխատանքների և անցած տարիների բնավարձի պարտքը մարելու վերաբերյալ ծանուցագրի դիմաց, մթերման կոմիտեյի շրջանային լիազորը պարտավոր է կոլտնտեսության ուրիշ պարտավորությունները պետությանը հացահատիկ հանձնելու վերաբերմամբ (հացահատիկի հանձնում, վարկի վերադարձ) կատարած չլինելու դեպքում ավելորդ հանձնված հացահատիկը գրել ի հաշիվ այդ պարտավորությունների կատարման, կամ յերբ կոլտնտեսությունը կատարել է իր բոլոր պարտավորությունները պետության հանդեպ, կոլտնտեսության ցանկությամբ ավելորդ հանձնված հացահատիկը հաշվել հացագնումների կամ աղունավարձի հաշվին, կամ վերադարձնել կոլտնտեսությանը բնամթերքով՝ այն կուլտուրաներով, որոնք ավելորդ են տրված։

Այս բոլոր դեպքերում մթերման կայանը ՄՏԿ-ից պահում է այն գումարը, որ վճարված է ՄՏԿ-ին բնավարձի գծով կոլտնտեսության ավելորդ հանձնած հացահատիկի դիմաց։

Բնավարձի գծով կոլտնտեսությունների ավելորդ հանձնած հացահատիկի այսպիսի փոխանցումն ուրիշ տեսակի հանձնումների, ինչպես և հացահատիկ վերադարձնելը շրջմթերման լիազորն անձնապես ստուգելուց հետո կարող է կատարել միայն մինչև 1937 թ. դեկտեմբերի 1-ը։

ԲՆԱՎԱՐՁԻ ԱՌԱՆՁԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա. ՀԱՏՈՒՍԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

18. ՄՏԿ կատարած աշխատանքների համար կոլտնտեսություններից հասնող բնավարձը վորոշվում է այն դրույթներով, վոր նշված են № 2 հավելվածում, հետևյալ առանձնահատկություններով.

ա) Զբաղված հարոսի, գարնանավարի, մշակման, ցանքի ու բերքահավաքի աշխատանքների համար, յերբ այդ հողամասերում ցանվում են այնպիսի կուլտուրաներ, վորոնց դիմաց, ըստ որինակելի պայմանագրի, բնամթերքով չեն վճարում, հաշվարկումը կատարվում է փողով, ՄՏԿ և կոլտնտեսությունների առանձին համաձայնությամբ սահմանված պայմաններով։ Իսկ այն դեպքերում, յերբ զբաղված հարոսներում ցանվում են այնպիսի կուլտուրաներ, վորոնց դիմաց վճարումը, ՄՏԿ և կոլտնտեսությունների որինակելի պայմանագրի համաձայն՝ նախատեսվում է բնամթերքով, բոլոր աշխատանքները (վար, մշակում, ցանք, բերքահավաք) վարձատրվում են 1937 թ. բերքից բնամթերքով, ընդհանուր հիմունքներով։

բ) Զյուն պահող (кулисный) հարոսը վարելու, մշակելու ՄՏԿ կատարած աշխատանքների բնավարձն ընդհանուր հիմունքներով դանձվում է հաջորդ տարվա բերքից այն կուլտուրաներով, վոր կցանվեն այդ հարոսներում։

Զյուն պահող (кулисный) հարոսներում յեգիպտացորենի և արևածաղկի ցանքի ու մշակման համար ՄՏԿ կատարած աշխատանքի բնավարձը դանձվում է ընդհանուր հիմունքներով, տվյալ տարվա յեգիպտացորենի ու արևածաղկի բերքից, նայած բերքատվության չափին։

գ) ՄՏԿ կատարած աշխատանքների դիմաց բնավարձը դանձվում է սահմանված դրույքներով անկախ այն բանից, թե ումն է պատկանում կցորդ ինվենտարը, վորով աշխատանք է կատարվել։

Կոլտնտեսություններին պատկանող կցորդ ինվենտարի ոգ-

տագործման համար ՄՏԿ պարտավոր է դրամական հաշվարկումներ կատարել կոլտնտեսությունների հետ։

Կոլտնտեսություններին պատկանող ինվենտարի ոգտագործման համար վճարումը, կցորդ ինվենտարի ընթացիկ նորոգման և կոտրվածքների նորոգման վճարումը կատարվում է ի հաշիվ ՄՏԿ։ Այս նպատակով կոլտնտեսություններից ինվենտար ստանալն ու հանձնելը ձևակերպվում է համապատասխան ակտերով։

դ) ԽՍՀՄ ԺԿԽ և Համկ(բ)Կ ԿԿ 1937 թ. մարտի 20-ի ՄՏԿ բնավարձի դրույքների վերաբերյալ որոշման համապատասխան, նախատեսվում են հետագա բոլոր կուլտիվացիաների բնավարձի համար սահմանված դրույքների դիջումներ կոլտնտեսություններին՝ սկսած յերկրորդ կուլտիվացիայից։ Հարոսի կամ կրկնահերկ կուլտուրաների կուլտիվացման աշխատանքների ակտերը պետք է կազմվեն անպայման նշելով, թե որերորդ կուլտիվացիան է—1-ին, 2-րդ, 3-րդ, թե՞ 4-րդ, որ կատարվել է ՄՏԿ տրակտորներով տվյալ կոլտնտեսության մեջ։ Վոչ ՄՏԿ տրակտորներով, այլ իրենց իսկ կոլտնտեսությունների միջոցներով կատարված հարոսի կուլտիվացիան չի հաշվվում։ Որինակ, առաջին կուլտիվացիան կատարել են ՄՏԿ տրակտորները, յերկրորդը՝կոլտնտեսությունների միջոցներով, յերրորդը՝ նորից ՄՏԿ տրակտորներով։ Այս վերջին կուլտիվացիան ձևակերպվում է ակտերով և նրա հաշվարկումը կատարվում է ինչպես յերկրորդ կուլտիվացիան՝ ՄՏԿ տրակտորներով։

Հիշատակված զեղջից հետո հարոսի կամ կրկնահերկ կուլտուրաների յուրաքանչյուր հետագա կուլտիվացիայի բնավարձի դրույքներն որինակելի պայմանագրի համաձայն հետևյալն են (1 հեկտարի համար կիլոգրամներով)։

Մի հեկտարի բերքը (ցենտներով)

	3-ից պակաս	3—4	5-ից պակաս	5—6 7-ից պակաս	7—8 9-ից պակաս	9—10 11-ից պակաս	11—12 13-ից պակաս	13-ից բարձր
Առաջին կուլտիվ.	1	2,5	5	7,5	9,5	12	14,5	
Յերկրորդ »	0,9	2,25	4,5	6,75	8,55	10,8	13,05	
Յերրորդ »	0,8	2,0	4,0	6,0	7,6	9,6	11,6	
Չորրորդ »	0,7	1,75	3,5	5,25	6,65	8,4	10,15	

Բնավարձի այս դրույքները տարածվում են նաև 1936 թվին հերկված հարոսի կուլտիվացիայի վրա՝ 1937 թ. բերքի համար։

Սրա համապատասխան, ՄՏԿ դիրեկտորը և կոլտնտեսությունների հետ հաշվարկումներ կատարողները տեղակալը յուրաքանչյուր կոլտնտեսության նախագահի հետ միասին 1936 թ. ակտերի հիման վրա որոշում են, որերորդ (1, 2, 3, թե՞ 4-րդ) կուլտիվացիան է կատարված ՄՏԿ տրակտորներով տվյալ կոլտնտեսության մեջ և նշումներ են անում ակտերի մեջ բոլորի ստորագրություններով։

Յեգիպտացորենի ու արևածաղկի կուլտիվացիան ակտերով ձևակերպելիս հաշվի յե առնվում ինչպես նախացանքային, այնպես եվ միջշարքային կուլտիվացիան (միջշարքային մշակումը)։

19. Որինակելի պայմանագրի համապատասխան՝ կոլտնտեսությունները ՄՏԿ կատարած գյուղատնտեսական աշխատանքների կոմպլեքսը վարձատրում են սովորականից ցածր, արտոնյալ դրույքներով։

ՄՏԿ աշխատանքների կոմպլեքսի համար հասնող բնավարձի չափը որոշելիս հաշվարկումը պետք է կատարել յուրաքանչյուր տեսակի կոմպլեքսի համար առանձին.

ա) հացահատիկի բերքահավաքը կոմբայններով կատարելիս—ՄՏԿ աշխատանքների կոմպլեքսի համար.

բ) ՄՏԿ կալսիչներով հացահատիկ կալսելիս—ՄՏԿ աշխատանքների կոմպլեքսի համար։

Կոմպլեքսի չափը որոշելիս հաշվի յե առնվում. վարելիս—հարոսի վարը, ցրտահերկն ու գարնանավարը միասին վերցրած. ցանելիս—աշնան և գարնան հացահատիկային կուլտուրաների ցանքը միասին վերցրած. բերքը հավաքելիս—հունձը հացահատիկի բերքահավաք մեքենաներով և կոմբայններով բերքահավաքը միասին վերցրած. կալսումը—ՄՏԿ կոմբայններով բերքահավաքն ու կալսիչներով կալսումը միասին վերցրած։

Յեթե կոլտնտեսության մեջ բացակայում է հիմնական աշխատանքներից թեկուզ մեկը՝ վարը, կամ ցանքը, կամ բերքահավաքը, կամ հացահատիկի կալսումը, ապա այս կոլտնտեսության մեջ կոմպլեքս չկա և կոլտնտեսության համար ՄՏԿ կատարած բոլոր աշխատանքների վճարումը կատարվում է առանձին աշխատանքների դրույքներով։

Այն տարածությունը որոշելու համար, որտեղ կատար-

ված է գյուղատնտեսական աշխատանքների ամբողջ կոմպլեքսը, համադրում ենք ՄՏԿ փաստորեն կատարած և կոմպլեքսի մեջ մտնող աշխատանքները, որինակ.

Հարոսի վար	390	հեկ.
Ցրտահերկ	750	»
Գարնանավար	360	»
Ընդամենը վար	1500	»
Աշնանացան	280	հեկ.
Գարնանացան	920	»
Ընդամենը ցանք	1200	»
Բերքահավաք		
Հունձ. հացահ. հնձող մեքենաներով	500	հեկ.
Բերքահավաք կոմբայններով	800	»
Ընդամենը բերքահավաք	1300	»
Հացահատիկի կալսում		
Բերքահավաք կոմբայններով	800	հեկ.
Կալսում կալսիչներով	600	»
Ընդամենը կալսում	1400	»

Կոմպլեքսի չափը վորոշում են յելնելով այն աշխատանքի ծավալից, վորը կոմպլեքսի մեջ մտնող բոլոր աշխատանքների մեջ ամենից քիչ է կատարված։

Մեր որինակի մեջ այստեղից գտնում ենք, վոր տվյալ կոլտնտեսության մեջ ՄՏԿ աշխատանքների ամբողջ կոմպլեքսը կատարված է 1200 հեկտարի վրա, այսինքն՝ կոլտնտեսության այս ամբողջ տարածության վրա, թեկուզ և զանազան հողամասերում, ՄՏԿ կատարել է կոմպլեքսի մեջ մտնող գյուղատնտեսական հիմնական աշխատանքներից յուրաքանչյուրը։

Կոմպլեքսի ընդհանուր չափից առաջի հերթին անպատճառ սահմանվում կոմբայններով բերքահավաք կատարելու կոմպլեքսը, վորը վորոշվում է կոմպլեքսի մեջ մտած կոմբայններով բերքահավաք կատարելու ծավալով։ Մեր բերած որինակում կոմբայններով բերքահավաքի կոմպլեքսը կազմում է 800 հեկտ.։ Կոմպլեքսի մնացած մասը, 1200 հ — 800 հ = 400 հեկտ. դառնում է կոմպլեքս՝ ՄՏ կայանի կալսիչներով հացահատիկ կալսելու դեպքում։

ՄՏԿ կոմպլեքս աշխատանքների համար ընավարձի հաշվում կատարվում է այն դրույքներով (կիլոգրամներով), վոր հաստատված են որինակելի պայմանագրով՝ բերքատվության համապատասխան խմբի համար կոմբայններով բերքահավաքի կոմպլեքսի համար առանձին, կալսիչներով կալսելու կոմպլեքսի համար

առանձին։ Մեր որինակում բերքատվության հինգերորդ խմբի դեպքում կոմպլեքս աշխատանքների ընավարձը կկազմի.

Կոմբայններով բերքահավաքի դեպքում կոմպլեքսի համար 71 կգ × 800 = 56800 կգ և կալսիչներով կալսելու դեպքում կոմպլեքսի համար — 105 կգ × 400 = 42000 կգ, ընդամենը 98800 կգ։

Հիշատակված վարձը՝ 98800 կգ հաշվված է կոմպլեքսի մեջ մտնող վարի, ցանքի և բերքահավաք մեքենաներով հնձելու համար։ Ինչ վերաբերում է կալսելուն, ապա սրա վարձը, համաձայն որինակելի պայմանագրի, ՄՏԿ կոմբայններով բերքահավաքի համար վճարվում է առանձին և կալսիչներով կալսելու համար առանձին, այս մեքենաներով կալսած հացահատիկի քանակի տոկոսներից, և այս աշխատանքների հաշիվները ներկայացվում են կոլտնտեսություններին առանձին-առանձին, աշխատանքը կատարելու հետ զուգընթաց, ամեն 5 որը մեկ անգամ։

Կոմպլեքսի չափը վորոշելով՝ յերկու տեսակի կոմպլեքսի մեջ եկ մտած աշխատանքները հանում ենք կոլտնտեսության համար ՄՏԿ կատարած գյուղատնտեսական աշխատանքների ընդհանուր ծավալից և ՄՏԿ աշխատանքների մնացած ամբողջ մասի վրա հաշվում ենք ընավարձն ըստ առանձին աշխատանքների դրույքների։

Մեր որինակում հիմնական աշխատանքների մնացած մասը, կոմպլեքսի մեջ մտած այս աշխատանքները հանելուց հետո կկազմի.

Աշխատանքների անունը	Ընդամենը կատարված է (հեկ.)	Մտցված է կոմպլեքսի մեջ (հեկ.)	Մնում է վճարելու առանձին աշխատ. դրույքներով (հեկ.)
Հարոսի հերկ	390	390	—
Ցրտահերկ	750	750	—
Գարնանավար	360	60	300
Աշնանացան	280	280	—
Գարնանացան	920	920	—
Հունձ՝ հացահատիկի բերքահավաք մեքենաներով	500	400	100

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. 1. հացահատիկի բերքահավաք մեքենաներով հնձելու աշխատանքի մնացած մասը վորոշվում է կալսիչներով կալսելիս կոմպլեքսի չափը հանելով

հացահատիկի բերքահավաքի մեքենաներով հնձի ընդհանուր ծավալից։

2. Կոմբայններով բերքահավաքի ու կալսելու աշխատանքների հանում չի կատարվում, վորովհետև այս աշխատանքների ընդհանուր վարձատրությունը կատարվում է առանձին հաշիվներով։

Կոմպլեքսի մեջ չմտնող աշխատանքների, այն է՝ փոցխումի, ցելի յերկրորդ հերկի և կրկնահերկի, ցրտավարի կրկնահերկի, զբաղված հարոսների վարի և աշնանացանի վարի, կուլտիվացիայի, դիսկումի և այլոց բնավարձը հաշվվում է այն դրույքներով, վոր սահմանված են որինակելի պայմանագրով յուրաքանչյուր աշխատանքի համար առանձին։

Կոմբայններով բերքահավաքի ու կալսելու բնավարձը հաշվում են այն կուլտուրայով, վոր հավաքել է ՄՏԿ կոմբայնը կամ կալսել է կալսիչը։ Մինչև բերքահավաքը կատարված աշխատանքի բնավարձը բաշխվում է ըստ առանձին հացահատիկային կուլտուրաների՝ կոլտնտեսության մեջ յեղած առանձին կուլտուրաների բերքահավաքի տարածության համապատասխան։

Մինչ բերքահավաքը կատարած աշխատանքների համար հասնող բնավարձի հաշիվները պետք է կազմվեն այնպես, ինչպես նշված է № 4 հավելվածում։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.—Յեթե, բացի կոմբայններով կատարած բերքահավաքից ու կալսելուց, ՄՏԿ բոլոր աշխատանքների համար հաշիվը գրելու պահին կալսելու գծով (կոմբայններով կատարած բերքահավաքի հետ միասին) ՄՏԿ կատարած փաստական աշխատանքներն ավելի շատ են, քան կոմպլեքսի մեջ մտնող աշխատանքներից ամենափոքրը, ապա կոմպլեքսի չափը և նրա բնավարձի հաշվումը կատարվում է այս հաշիվը գրելու հետ անմիջապես։

4. Յեթե վերև նշված հաշիվը գրելու պահին կալսելու գծով (կոմբայններով բերքահավաքի հետ միասին) ՄՏԿ կատարած փաստական աշխատանքներն ամենափոքրն են կոմպլեքսի մեջ մտնող աշխատանքների թվում, ապա կոմպլեքսի չափը չի վորոշվում այս հաշվի մեջ և բնավարձի հաշվումը կատարվում է ՄՏԿ բոլոր աշխատանքների համար, բացի կոմբայններով բերքահավաքից ու կալսելուց, ըստ առանձին աշխատանքների դրույքների։

Այս դեպքերում ՄՏԿ աշխատանքների կոմպլեքսի վորոշումը և նրանց բնավարձի հաշվումն ըստ որինակելի պայմանագրի հաստատված դրույքների կատարվում է այն բանից հետո, յերբ ՄՏԿ կալսելու (կոմբայններով բերքահավաքի հետ միասին) գծով կատարած փաստական աշխատանքն ամենաքիչը լինի կոմպլեքսի մեջ մտնող աշխատանքների թվում։ Այն ժամանակ ՄՏԿ վերահաշվարկման է յենթարկվում ՄՏԿ բոլոր աշխատանքները, բացի կոմբայններով բերքահավաքից ու կալսելուց և կոլտնտեսությանը նոր հաշիվ է ներկայացնում հնի փոխարեն, վորը լիովին վերացվում է։ Այս վերջին հաշվի մեջ ՄՏԿ հիշատակություն է անում նախկին հաշիվը վերացնելու մասին։

Իսկ յերբ ՄՏԿ կալսելու (կոմբայններով կատարած բերքահավաքի հետ միասին) գծով կատարած փաստական աշխատանքը մինչև կոլտնտեսության ամբողջ բերքը կալսելու վերջը մնա նվազագույնը կոմպլեքսի մեջ մտնող աշխատանքների թվում, այն դեպքում, բացի կոմբայններով բերքահավաքից ու կալսելուց, ՄՏԿ բոլոր աշխատանքների կոմպլեքսի չափը և նրա համար բնավարձի հաշվումը՝ անպայման վերահաշվարկում կատարելով և նոր հաշիվ գրելով հնի փոխարեն (վորը վերացվում է), կատարվում է այս կոլտնտեսության մեջ ՄՏԿ կալսիչներով հացահատիկի կալսումը վերջացնելու ժամանակ։

Յեթե այս դեպքում կոլտնտեսությունը գերահանձնի բնավարձի հացահատիկը, ապա վերջինս ուրիշ հողվածի փոխադրելը կամ վերադարձնելը կատարվում է նույն կարգով, ինչ նշված է այս հրահանգի 17-րդ կետում։

20. Բնավարձը հաշվելու համար կոմբայնի կալսած հացահատիկի քաշը վորոշվում է բունկերից անմիջականորեն ստացված հացահատիկի քաշով, առանց լրացուցիչ մաքրման։

Վճռականապես արգելվում է կոմբայնով կալսած հացահատիկի քանակը վորոշել ըստ բունկերի ծավալի։

Կոմբայնի կալսած ամեն մի բունկեր հացահատիկը պետք է կշռվի։

ՄՏԿ կալսիչներով հացահատիկը կալսելու բնավարձը հաշվվում է կալսիչից դուրս յեկած ամբողջ հացահատիկից և վոչ թե հացահատիկի այն քանակից, վոր կստացվի լրացուցիչ հողմահարումից կամ տեսակավորումից։

ՄՏԿ կոմբայններով բերքահավաքի և կալսիչներով կալսելու հաշիվների որինակը բերվում է հավելված № 3-ում։

21. Կալսած հացահատիկը հաշվի առնելու համար, որինակելի պայմանագրի 9-րդ կետի համապատասխան պետք կազմել ընդունման ակտեր, վորոնք ստորագրում են ՄՏԿ դիրեկտորը կամ կոլտնտեսությունների հետ հաշվարկումներ կատարող նրա տեղակալը և կոլտնտեսության վարչության նախագահը։ Բացի սրանից, ակտը վավերացվում է ցանք անողի ստորագրությամբ։ Ակտերում պետք է նշվի կատարված կալման վորակը։

Կալված ընդունելու վերաբերյալ ակտ կազմելիս ՄՏԿ դիրեկտորը և կոլտնտեսությունների հետ հաշվարկումներ կատարող նրա տեղակալը կալման որագրի արմատներով ճշգրիտ հաշվում են կալված հացահատիկը, համեմատելով այս քանակը կշռողի ամենորյա տեղեկանքների և կոմբայնավարների, տրակտորիստների ու կալսիչների մեքենավարների հնգորյա հաշվետվությունների հետ։ ՄՏԿ դիրեկտորը և կոլտնտեսության վարչությունը պետք է միջոցներ ձեռք առնեն՝ կալսումն ապահովելու՝ ճիշտ կշռքներով, հացահատիկի փոխադրումը՝ հուսալի կոլտնտեսականների միջոցով, իսկ կալը՝ խիստ պահպանությամբ և կալսելու ամբողջ պրոցեսը՝ հստակ հաշվառումով ու հսկողությամբ։

ՄՏԿ դիրեկտորը և կոլտնտեսությունների հետ հաշվարկումներ կատարող նրա տեղակալը պարտավոր են հսկել և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել, վորպեսզի բարելավեն ՄՏԿ կալսիչների ու կոմբայնների աշխատանքը, ձգտելով լրիվ չափով կատարել ՄՏԿ կալսիչներով կալսելու և բերքահավաքը կոմբայններով կատարելու պլանը յուրաքանչյուր կոլտնտեսության հետ կնքված պայմանագրի սահմաններում։

22. Բնավարձի հաշվարկումների համար կոլտնտեսության մեջ կալված հացահատիկի ընթացիկ հաշվառումը կատարում է ՄՏԿ կշռավարը՝ կոլտնտեսության բրիգադիրի հետ միասին։

ՄՏԿ կշռողներին ընտրում է ՄՏԿ դիրեկտորը և կոլտնտեսությունների հետ հաշվարկումներ կատարող նրա տեղակալը բերքահավաքից մի ամիս առաջ, լավագույն, ստուգված կոլտնտեսականներից. նրանց հրահանգում են ՄՏԿ-ում և նրանք կատարում են ՄՏԿ կշռողի աշխատանքը՝ այս ժամանակամիջոցում ազատվելով կոլտնտեսության ամեն մի աշխատանքից։ ՄՏԿ կշռողներին աշխատանքից հանում և ուրիշներով փոխարինում են միայն ՄՏԿ դիրեկտորը կամ նրա տեղակալը։

ՄՏԿ-ի կշռողը պատասխանատու է այն ամբողջ հացահատիկը լրիվ ու ճիշտ կշռելու համար, վոր անմիջականորեն դուրս է գալիս կալսիչից (մինչև մաքրումը), և վորը դուրս է գալիս անմիջականորեն կոմբայնի բունկերից։

Կոլտնտեսության բրիգադիրն ու ՄՏԿ կշռողը կալման որագրում գրանցում են հացահատիկի ամեն մի քաշ, որվա վերջում ամփոփում են կալսիչներով կալսածը և նրանից զատ կոմբայններով կալսածը և միատեղ ստորագրություններով ամեն որ զեկույց են ուղարկում ՄՏԿ՝ կալսելու մասին։

Կշռված հացահատիկի պահպանության համար պատասխանատու է վոչ թե ՄՏԿ կշռողը, այլ կոլտնտեսության բրիգադիրը կամ կշռողը, վորոնք կոլտնտեսության նախագահի ցուցումով հացահատիկն ուղարկում են պետության մթերման կայանը կամ կոլտնտեսության պահեստը։

23. Հացահատիկն ուղարկելով մթերման կայանը՝ կոլտնտեսությունն անպայման բեռնագիր է գրում և նրա մեջ նշում, թե վոր պարտավորությունների հաշվին և հանձնում հացահատիկը տվյալ կոլտնտեսությունը,—«ի հաշիվ հացահատիկի հանձնումների», «ի հաշիվ ՄՏԿ բնավարձի», թե «ի հաշիվ սերմա-անասնի կերի վարկի»։ Ամեն ուղղությամբ ուղարկվող հացահատիկի համար գրվում է առանձին բեռնագիր։

2012
38

Բ. ՎՈՒՇ ԵՎ ԿԱՆԵՓ

24. Վուշի բնավարձը վճարվում է թելով և ցողունով՝ տվյալ կոլտնտեսության կոնտրակտացիայի պլանի համապատասխան։ Թելը կամ ցողունը բնավարձի կարգով կոլտնտեսությունները հանձնում են վոչ պակաս, քան կոնտրակտացիայով փաստորեն հանձնածի միջին համարով։

Միջին ռուսական կանեփի բնավարձը վճարվում է հում կանեփաթելով կամ ցողունով (треста) և սերմերով, իսկ Միության միջին շրջաններում հարավային կանեփից՝ բերքատվության խմբի նույն դրույքներով, միայն հում կանեփաթելով կամ ցողունով։

Կոնտրակտացիայով հում կանեփաթել հանձնող կոլտնտեսությունները բնավարձը նույնպես հանձնում են հում կանեփաթելով, իսկ կոնտրակտացիայով ցողուն կամ կանեփաթել հանձնող կոլտնտեսությունները բնավարձ են վճարում միայն ցողունով։ Կոլտնտեսությունները բնավարձի կարգով կանեփաթել կամ

ՀՍՍՀ-ՍՍՌ
Գոս. Պրոմ. Գրադարան
Ակ. Ա. Մասիսյան

ցողուն են հանձնում վոչ պակաս, քան կոնտրակտացիայով փաստորեն հանձնածի միջին վորակի։

ՄՏԿ կանեփի բնավարձի հաշվին վորձականեփն (շուխի) ընդունում է սովորական կանեփին հավասար։ Կանեփի բնավարձի հանձնումը պետք է կատարվի կոնտրակտացիոն պարտավորությամբ կոլտնտեսության համար հաստատված ժամկետին։

Գ. ԲԱՄԲԱԿ

25. Բամբակի բնավարձի վերաբերյալ ՄՏԿ-ները վոչ ուշ, քան սեպտեմբերի 1-ը համապատասխան մթերման կայաններին ներկայացնում են այն հաշիվների պատճենները, վոր ներկայացված են կոլտնտեսություններին բամբակի գծով կատարված և 1937 թ. բերքից բնավարձով վճարելիք աշխատանքների մասին։

Հետագայում ՄՏԿ-ները մթերման կայաններին ուղարկում են այն հաշիվների պատճենները, վոր գրված են կոլտնտեսություններին՝ բամբակի բերքահավաքի աշխատանքների համար, հանելով գյուղատնտեսական աշխատանքների սահմանված կոմպլեքսը կատարելու համար դեղը։

Մինչև հոկտեմբերի 5-ը կոլտնտեսությունների հանձնած հնդավորի առաջին պարտիաներից ՄՏԿ բնավարձը կոլտնտեսությունները պետք է հաշվեն 25%-ի չափով։ Հոկտեմբերի 5-ից հետո բնավարձը վճարվում է ամբողջ հանձնվող բամբակի վոչ պակաս, քան 50%-ի չափով, բայց այն հաշվով, վոր ՄՏԿ ամբողջ պարտքը մարվի մինչև հոկտեմբերի 20-ը։

Եթե կոլտնտեսությունն ուշացնում է ՄՏԿ բնավարձի հանձնումը, ապա մթերման կայանն ինքը պահումներ է կատարում ի հաշիվ ՄՏԿ, ընդվորում պահումը կատարվում է առաջին անգամ բերված հնդավորից։

ՄՏԿ ոգտին հատկացված բամբակի արժեքը մթերման կայանը գրանցում է կոլտնտեսության հաշվի պահանջին և այս գումարն անց է կացնում նրա հաշվի դեբետով, իբրև մատուցված ՄՏԿ։

ՄՏԿ տալիք բնավարձի պարտքը մարելու համար կոլտնտեսություններից պահված բոլոր գումարները (բամբակի արժեքը) մթերման կայանը մի որում անց է կացնում ՄՏԿ հաշվին։

Ի փոխհատուց ՄՏԿ և կոլտնտեսությունների որինակելի պայմանագրի 12-րդ կետի, բամբակի բնավարձի վերաբերյալ ԽՍՀՄ ԺԿԽ սահմանել է, վոր ըստ բամբակի բերքատվության չափերի կոլտնտեսություններն այս կամ այն խմբին դասելը կատարվի շրջգործկոմի կողմից գարնանը՝ տվյալ կոլտնտեսության համար հաստատած բամբակի բերքատվության առաջադրության հիման վրա, պայմանով վոր դրա հիման վրա բնավարձի վերաբերյալ ՄՏԿ և կոլտնտեսությունների հաշվարկումները կատարվեն միայն նախապես։

Իսկ ՄՏԿ վերջնական հաշվարկումները կոլտնտեսությունների հետ բամբակի բնավարձի վերաբերյալ կատարվում են բամբակի մթերումները վերջանալուց հետո՝ տվյալ կոլտնտեսության բամբակի փաստական բերքատվության հիման վրա, յելնելով նրա հանձնած բամբակի ընդհանուր քանակից։

Բամբակի ամբողջ բերքը կոլտնտեսության կողմից մթերման կայաններին հանձնել վերջացնելուց հետո ՄՏԿ-ն մթերման կայանի և կոլտնտեսության նախագահի հետ միասին սահմանում են տվյալ կոլտնտեսության բամբակի վերջնական բերքատվությունը։ Եթե վերջնական բերքատվությունը բարձր կամ ցածր լինի կոնտրակտացիայի ժամանակ շրջգործկոմի հաստատած բերքատվությունից և կոլտնտեսությունն անցնի բերքատվության բարձր կամ ցածր խմբի՝ բնավարձը հաշվելու համար, ՄՏԿ պարտավոր է կազմել բնավարձի վերջնական հաշվարկում բերքատվության այն խմբի բնավարձի դրույքների հիման վրա, վորին անցել է կոլտնտեսությունը։ ՄՏԿ այս վերջնական հաշվարկումը ներկայացնում է կոլտնտեսության (իսկ պատճենը մթերման կայանին), նշելով կոլտնտեսությունից ՄՏԿ-ին հասնող բնավարձի լրացուցիչ քանակն ու նրա արժեքը (յեթե կոլտնտեսությունն անցել է բերքատվության բարձր խմբի), կամ կոլտնտեսությունից ՄՏԿ-ի ավելորդ ստացած բնավարձի քանակն ու նրա արժեքը (յեթե կոլտնտեսությունն անցել է բերքատվության ցածր խմբի), այս դեպքում արժեքը վորոշվում է հնդավորի այն տեսակների մթերման գնի հաշվով, վոր կոլտնտեսությունը հանձնել է պլանից դուրս։

ՄՏԿ ներկայացրած վերջնական հաշվարկի համապատասխան, մթերման կայանը, տեղեկացնելով կոլտնտեսության վարչությանը, կոնտրակտացիայի կարգով ամբողջ հանձնված բամբակից բնավարձի յե վերածում կամ, ընդհակառակը՝ բնավարձի կարգով տրված ամբողջ բամբակից կոնտրակտացիա-

յի յե վերածում բամբակի այն քանակը, վոր տարբերություն ե հանդիսանում ՄՏԿ բնավարձի սկզբնական և վերջնական հաշվարկի միջև։

ՄՏԿ-ին լրացուցիչ կերպով հասնող բնավարձ բամբակի քանակի արժեքը կոլտնտեսությունը պարտավոր ե մտցնել ՄՏԿ ընթացիկ հաշիվը։ ՄՏԿ իր հերթին պարտավոր ե ավելորդ ստացած բնավարձի արժեքը մտցնել կոլտնտեսության ընթացիկ հաշիվը։

ՄՏԿ-ները վերադիր-պարգևները հաշվում են պլանից դուրս հանձնված բնավարձի ամբողջ քանակից, հաշվելով վերահաշվարկումներով ստացված բնավարձի լրացուցիչ քանակը։

Բամբակի յերկրորդ ցրտահերկի բնավարձը վճարվում ե հետագա գարնանավարի համար հաստատված դրույքներով։

դ. ԽՈՏՀԱՆՐԳ

26. ՄՏԿ տրակտորային խոտհնձի մեքենաներով կատարած խոտհարքի համար 1937 թ. պահպանվում ե այն բնավարձը, վոր հաստատված ե յեղել 1935 թ. և գործել և 1936 թ., այսինքն՝ տրակտորային խոտհնձիչներով վաստակաև տարածության քաղված խոտի ընդհանուր բերքի վոչ ավելի, քան 15%-ի չափով։

Յուրաքանչյուր ՄՏԿ համար խոտի բնավարձի չափը հաստատում են մարզային (յերկրային, հանրապետական) խորհրդային որգանները մթերման կոմիտեյի լիազորի և յերկրային (մարզային) հողվարչությունների ու հանրապետությունների հողժողկոմատների ներկայացուցիչների հետ միասին, նայած խոտի բերքին և տեղական այլ պայմաններին։

Կոլտնտեսությունների ձիերով և ՄՏԿ-ների բերքահավաք ինվենտարով կատարված խոտհարքի աշխատանքները կոլտնտեսությունները վարձատրում են փողով՝ ՄՏԿ դիրեկտորների և համապատասխան կոլտնտեսությունների վարչությունների համաձայնությամբ։

ԽՍՀ Միության հողժողկոմ՝ ՉԵՐՆՈՎ

Մթերումների կոմիտեյի նախագահ՝ ԿԼԻՑՆՈՐ

Ճիշտ ե՝ ԻԳՆԱՏԵՎԱ

28/VI 37 թ.

Հավելված № 1

ՁԼ № 41

(ՄՏԿ անունը) « » 1937 թվի

Ա Կ Տ № 15

1937 թ. « » ի պայմանագրի հիման վրա տրակտորային ջոկատի 1937 թ. մինչև կատարած և ՄՏԿ-ից (կոլտնտ. անունը) կոլտնտեսության ընդունված աշխատանքների համար։

Բնամթերքով հաշվարկման պայմանները

Աշխատանքի անունը	Կուլտուրա	Կցորդ մեքենաներ			Կատարված աշխատանքը		Միավորի վարձատրանքը	Ամենամյա խորության թիվը (սմ հերթերի թիվը)
		Անունը	Ումից են (ՄՏԿ, թե կոլտնտեսություն)		Հեկտար	Ցենտներ		
Գարնանավար	ցորեն	յեռախոփ գութան	ՄՏԿ		40	—	բավարար	18 սմ

Այս աշխատանքը կատարելու համար տրակտորիստներին աշխատ ե հաշված՝

_____ « » աշխատ

_____ « » աշխատ

Դիտողություններ պայմանագիրը խախտելու մասին.

1. Կոլտնտեսությունն ուշացրել ե ջուր հասցնելը, վորի հետևանքով 2 տրակտոր պարապուրդ են ունեցել 1/2 հերթափոխ։

2. ՄՏԿ մի տրակտոր պարապուրդ ե տվել 20 ժամ՝ տրակտորի մի անհնարելի կոտրվածքի նորոգումը ՄՏԿ կողմից ուշանալու պատճառով։

Կոլտնտեսության նախագահ՝ (ստորագրություն)

ՄՏԿ դիրեկտոր՝ (ստորագրություն)

Հավելված № 2

ՄՏԿ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՑՆԵՐԸ

1. ՀԱՅՐԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՅԵՎ ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ՀԱՄԱՐ. (կիլոգրամներով)

№ № ըստ կարգի	Աշխատանքի անունը	1 հեկտարի բերքը ցենտներով						
		3-ից պակաս	3—5-ից պակաս	5—7-ից պակաս	7—9-ից պակաս	9—11-ից պակաս	11—13-ից պակաս	13-ից բարձր
1	Գարնանավար	9	22	50	70	90	110	130
2	Ցրտահերկ և հարոսի վար	8	20	42	60	80	100	120
3	Ցանք	2	4	8	12	16	20	25
4	Հունձ	4	10	21	30	40	48	58
5	Կալսում	Կալսիչներով կալսած հացահ. քանակի 7%						
6	Տափանում՝ 1 յերես	0,5	1	1,5	2	3	4	5
7	Դիսկում և կուլտիվացիա	1	2,5	5	7,5	9,5	12	14,5
8	Աշնանավար և ցելի կրկնավար	6	15	30	45	57	72	87
9	Խոզանի յերեսվար	2	5	10	15	19	24	29
10	Բերքահավաք կոմբայններով	Կոմբայններով կալսած հացահ. քանակի 9%						
11	Ցեզիպատացորնի բերքահավաք պիկերներով	ՄՏԿ կալսիչներով» «յեգիպատացոր.» 4%						

№ № ըստ կարգի	Աշխատանքի անունը	1 հեկտարի բերքը ցենտներներով						
		3-ից պակաս	3—5-ից պակաս	5—7-ից պակաս	7—9-ից պակաս	9—11-ից պակաս	11—13-ից պակաս	13-ից բարձր
12	Ցեզիպատացորնի բերքահավաք պիկերներով և յեգիպատացորնի կալսում կալսիչներով	ՄՏԿ կալսիչներով կալսված հատիկի 9%						
13	Գյուղատնտեսական հիմնական աշխատանքների ամբողջ կոմպլեքսը կատարելու համար.							
	ա) հացահատիկը կալսիչներով կալսելիս (հարոսի վար կամ ցրտահերկ, ցանք, բերքահավաք, կալսում)	13	30	55	80	105	130	170
		և ՄՏԿ կալսիչներով կալսած հացահատիկի 7%						
	բ) հացահատիկը կոմբայններով հավաքելիս (հարոսի կամ աշնան վար, ցանք, կոմբայններով բերքահավաք)	9	20	37	54	71	88	128
		և ՄՏԿ կոմբայններով կալսած հացահատիկի 9%						
	Ցերկրորդ, յերրորդ և չորրորդ կուլտիվացիայի համար ՄՏԿ աշխատանքների բնավարձի դրույքները իջեցվում են՝ յերկրորդ կուլտիվացիայի համար 10%-ով, յերրորդի՝ 20% և չորրորդի՝ 30% և կազմում են (կիլոգրամներով).							
	Ցերկրորդ կուլտիվացիա	0,9	2,25	4,5	6,75	8,55	10,8	13,05
	Ցերրորդ »	0,8	2,0	4,0	6,0	7,6	9,6	11,6
	Չորրորդ և հետագա կուլտիվացիա	0,7	1,75	3,5	5,25	6,65	8,4	10,15

Հավելված № 3

ՀԱՇԻՎ №

_____ կոլտնտեսության
(հացահատիկային կուլտուրաների համար)

_____ ՄՏԿ

«_____» _____ 1937 թ.

1937 թ. բերքից բնավարձով վճարվող աշխատանքների վերաբերյալ համաձայն ՄՏԿ և կոլտնտեսության 1937 թ. մարտի _____ № պայմանագրի։

Աշխատանքների անունը, փաստաթղթերի №-ը և ամսաթիվը	Աշխատանքի քանակը	Բնավարձի դրույքը պայմանագրով	Հասնում է. բնավարձ
Կոմբայններով բերքահավաք			
Հավաքված է 130 հեկ. հաճար և կալսված ըստ 1937 թ. 6 հուլիսի № 26 ակտի	1404 ց	9%	12.636 կգ հաճար
Հավաքված է 50 հեկ. ցորեն և կալսված ըստ 1937 թ. 5 հուլիսի № 26 ակտի	530 ց	9%	4.770 կգ ցորեն
Կալսում			
Կալսված է 55 հեկ. հաճար ըստ 37 թ. 5 հուլիսի № 27 ակտի	562 ց	7%	3.934 կգ հաճար
Կալսված է գարի 60 հեկ. նույն ակտով	500 ց	7%	3.500 կգ գարի

Ընդամենը . . . . . 24. 840 կգ
Այս թվում՝ հաճար — 16.570 »
ցորեն — 4.770 »
գարի — 3.500 »

ՄՏԿ դիրեկտոր (ստորագրություն)

Ավագ հաշվապահ (ստորագրություն)

Հավելված № 4

Սարատովի մարզ _____ ՄՏԿ
_____ կոլտնտեսության _____ 1937 թ.

ՀԱՇԻՎ №
ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1937 թ. բերքից բնավարձով վճարվող աշխատանքների համար, համաձայն ՄՏԿ և կոլտնտեսության 1937 թ. մարտի _____ № — պայմանագրի և շրջանային հանձնաժողովի 1937 թ. _____ — ի վորոշման, կոլտնտեսությունը բերքաժողության հինգերորդ խմբին դասելու մասին՝ մի. հեկտարից 9 և 11-ից պակաս ցենտ.

Աշխատանքների անունը	Ընդամենը դաշտային (մանրացել) ձգատարածություն (հեկտ.)	Դրանցից կիրառվել է մեքենաներ (հեկտ.)	Մնում է վճարելու առանձին աշխատանքների դրությունով (հեկտ.)	Բնավարձի դրույքը (կգ)	Հասնում է բնավարձ (կգ)
1937 թ. աշխատանքներ					
Հարոսի վար					
1936 թ. 5 մայիսի № 5 ակտով 230 հեկ., 10 մայիսի № 6 ակտով 160 հեկ.	390	390	—	—	—
Փոցխում 1 յերես					
1936 թ. 5 մայիսի № 5 ակտով 260 հեկ. 10 մայիսի № 6 ակտով 320 հեկ.	580	—	580	3	1.740
Հարոսի առաջին կուլտիվացիա 1936 թ. հունիսի 15-ի և 20-ի №№ 9 և 10 ակտերով	260	—	260	9,5	2.470
Հարոսի յերկրորդ կուլտիվացիա 1936 թ. 10 հուլիսի № 13 ակտով	240	—	240	8,55	2.052
Հարոսի յերրորդ կուլտիվացիա 36 թ. 5 ոգոստոսի № 15 ակտով	150	—	150	7,6	1.140
Հարոսի չորրորդ կուլտիվացիա 36 թ. 15 ոգոստոսի № 19 ակտով	120	—	120	6,55	798
Զրաղված հարոսի վար 36 թ. 25 ոգոստոսի № 13 ակտով	20	—	20	57	1.140

Աշխատանքների անունը	Ընդամենը կատարված և աշխատանք (հեկտ.)	Նրանցից կիսատարված և մտցված (հեկտ.)	Մնում է վճարելու առանձին աշխատանքների համար (հեկտ.)	Բնավարձի դուրս գրված (կգ)	Հանում է բնավարձ (կգ)
Աշնանավար					
36 թ. 20 ոգոստոսի № 17 ակտով	80	—	80	57	4.560
Աշնանացան					
36 թ. 5 սեպտեմբերի № 20 ակտով 140 հեկ.					
36 թ. 10 սեպտեմբերի № 22 ակտով 140 հեկ.	280	280	—	—	—
Աշնանավար					
36 թ. 10 սեպտեմբերի № 18 ակտով 270 հեկ.					
36 թ. 15 սեպտեմբերի № 21 ակտով 200 հեկ.					
36 թ. 20 սեպտեմբերի № 23 ակտով 180 հեկ.					
36 թ. 25 սեպտեմբերի № 24 ակտով 100 հեկ	750	750	—	—	—
1937 թ. աշխատանքներ					
Գարնանավար					
37 թ. 15 ապրիլի № 2 ակտով 160 հեկ.					
37 թ. 25 ապրիլի № 3 ակտով 200 հեկտար	360	60	300	90	27.000
Փոցխում մեկ յերես					
37 թ. 10 ապրիլի № 3 ակտով 200 հեկ.					
25 ապրիլի № 4 ակտով 350 հեկ.					
20 ապրիլի № 7 ակտով 355 հեկ.					
25 » № 9 ակտով 325 հեկ.	1230	—	1230	3	3.690
Ցրտահերկի կուլտիվացիա					
37 թ. 15 ապրիլի № 2 ակտով 360 հեկ.					
37 թ. 20 ապրիլի № 6 ակտով 220 հեկ.	580	—	580	9,5	5.510

Աշխատանքների անունը	Ընդամենը կատարված և աշխատանք (հեկտ.)	Նրանցից կիսատարված և մտցված (հեկտ.)	Մնում է վճարելու առանձին աշխատանքների համար (հեկտ.)	Բնավարձի դուրս գրված (կգ)	Հանում է բնավարձ (կգ)
Ցրտահերկի կրկնավար					
37 թ. 20 ապրիլի № 5 ակտով	120	—	120	57	6.840
Գարնանացան					
37 թ. 1 ապրիլի № 8 ակտով 250					
» 5 մայիսի № 10 » 520					
» 10 » № 11 » 150	920	920	—	—	—
Հացահատիկի հունձ բերքահավաքի մեքենաներով·					
Հավաքված է 1937 թ. 10, 15 25 հուլիսի № 17, 19, 21 ակտերով	500	400	100	40	4000
Հացահատիկը կոմբայններով հավաքելու աշխատանքների կոմպլեքսի համար հաշված է	—	—	800	71	56.800
ՄՏԿ կալսիչներով հացահատիկը կալսելու կոմպլեքսի համար հաշված է	—	—	400	105	42.000

Ընդամենը բնավարձ . . . . . 159.740 կգ

կամ կոլտնտեսության 1 հեկտար բերքահավաքի տարածությանը (159.740 կգ։ 2000 հեկ.) 79,87 կգ։

Ըստ առանձին կուլտուրաների բնավարձ պիտի հանձնել.

Հանար բերքահավաք տարած.	400 հ.	×	79,87 կգ	=	31948 կգ
Ցորեն	»	»	700	×	»	»	55909 »
Գարի	»	»	100	×	«	»	7987 »
Վարսակ	»	»	300	×	»	»	28961 »
Լոբազգի	»	»	100	×	»	»	7987 »
Կորեկ	»	»	200	×	»	»	15974 »
Հնդկացորեն	»	»	50	×	»	»	3998 »
Վիկա	»	»	150	×	»	»	11981 »
Ընդամենը	2000 հ.	×	79,87 կգ	=	159740 կգ.

(Մեկ հարյուր հիսուն ինները հազար յոթ հարյուր քառասուն կիլոգրամ)

Կոմպլեքսի չափը վորոշված է այսպես.

1. վար (հարոսի վար, ցոտահերկ և գարնանավար) — 1.500 հեկ.
2. ցանք (դարնան և աշնան հացահ. կուլտուրաները) — 1.400 »
3. բերքահավաք (հավաքված է կոմբայններով 800 հ.
   և հնձված բերքահավաքի մեքենաներով 500 հ.)—1.300 »
4. Կալսում (կոմբայններով հավաքված է 800 հ.
   և ՄՏԿ կալսիչներով կալսված 600 հ.) 1400 »

Այստեղից ՄՏԿ աշխատանքների ամբողջ կոմպլեքսը կազմում է 1200 հ. վորից կոմբայններով հացահատիկը հավաքելու կոմպլեքսը—800 հ. և կալսիչնե-քով կալսելու կոմպլեքսը—400 հ.։

Վերև նշված հացահատիկի քանակը (159.740 կգ) պետք է հանձնվի Զագոռզեռնոյի _____ կայանին վոչ ուշ, քան 1937 թ. _____

ՄՏԿ դիրեկտոր (ստորագրություն)
Ավագ հաշվապահ (ստորագրություն)

Թարգմանեց՝ Մ. Զաքարյան
Խմբագիր Վ. Վարդանյան
Տեխ. խմբ. և սրբագրիչ՝ Ե. Այվազյան
Պոնտրոլ սրբագրիչ՝ Գար. Հակոբյան
Գլավլիտի լիազոր № 1201 հրատ. 448, տիրաժ 1000, պատվ. 620

Հանձնված է արտադրության 1937 թ. հուլիսի 20-ին
Ստորագրված է տպագրելու 1937 թ. հուլիսի 31-ին

Դյուդիրատի տպարան, Ցերևան, Նալբանդյան 11

ՀՍՍՀ-ՍՍՌ
Ազգային գրադարան
NL0209819

НКЗ АРМЯНСКОЙ ССР
ЗЕРНОВОЕ УПРАВЛЕНИЕ

ИНСТРУКЦИЯ

по производству расчетов МТС с колхозами за работы, оплачиваемые колхозами натурой из урожая 1937 года

Селхозгиз 1937 Ереван